ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐ Է ՀՂԵԼ ԻՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՆՔՆԱԹԻՌԻ ՎԹԱՐԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 21 մայիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ այս օրերին հովվապետական այցով գտնվում է Կանադայի հայոց թեմում, տեղեկանալով Իրանում կատարված ինքնաթիռի վթարի մասին, ցավակցական գիր է հղել զոհվածների հարազատներին և Իրանի իշխանություններին:

«Սրտի խոր ցավով Կանադայում հայրապետական Մեր այցի ընթացքին տեղեկացանք Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում տեղի ունեցած ինքնաթիռի վթարի մասին, որի հետևանքով զոհվել են Իրանի Իսլամական Հանրապետության բարձրաստիճան պետական այրեր և հայ օդաչուներ: Մեր սրտաբուխ վշտակցությունն ենք բերում Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններին և ընչեցյալների ազգակից հարազատներին՝ վախճանյալների ողբերգական ու անժամանակ մահվան առիթով: Աղոթք ենք բարձրացնում առ Ողորմածն Աստված, որ Տերը ամենատուր Իր գթությամբ հավիտենական հանգիստ պարգևի զոհվածների հոգիներին՝ միխիթարություն պարգևելով ընչեցյալների ազգակից հարազատներին:

Աղոթք և օրհնություն զոհվածների հիշատակին», - ասված է Վեհափառ Հայրապետի ցավակցական ուղերձում: